ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ

Աղբիւրի յաւելուած

լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 13 կիրակի 6 ապրիլի | ութերորդ տարի 1897

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարազի պրէմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստուած մեծադիր *ֆոտո-գրաւիւրը պատկերը*, 2) *Մայրիկի ննջարանում*, մի շքեղ խրոմօ, 3) *Ոսկէ շղթաներում, կամ Հարեմի աղջիկը*, 4) *Իւրաքանչիւրը ամիս Պարիզի մոդաներ*, բացատրութիւններով։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (արտասահման 4 ր. կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. (արտասահման 10 ր. կամ 30 ֆր.), ամսական *Տարազը* 50 կ. *Աղբիւրը*—25 կ. *պրեմիաները տալուում է* Աղբիւր-Տարազ *միևնոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի։*

Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Таразъ կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Մեղրի գիւղամաղաթը

Լ Ի Մ Ա Ն *)

I

Ողջո՛յն, Լէման, պայծառ Լէման,
Ձմրդ աշխարհի երեսին.
Որքան անգամ ես տրտմական
Երազել եմ քո մասին։
Հրաշալի ես դու, ո՛ Լէման,
Գեղանի կո՛յս մըտազբաղ,
Քո զըմրուխտէ ջրով աննըման,
Ափերովդ քո էքնաղ։
Ողջո՛յն վըճիտ ալիքներիդ,
Նրանց մեղմասահ խաղերին,
Որ յօղում են գեղափըթիթ
Թալարը քո ափերին։
Լուսինը քո ջինջ երեսին
Յոլանում է գաղտնաբար,
Աստղերն լողում են միասին
Ծըփերիդ հետ համբարբար,
Ամպերն խմբով սիրահար
Օրօրւում են քո գրկում,
Կապոյտ երկինք քեզ ժպտում։
Իբր շողշողուն հուլունք վիւաճ՝
Լուանի աւազն արծաթէ
Գեղեցկափայլ շաղ է տրւած
Երեսիդ վրայ զըմբուխտէ։
Եւ դու նազով գուրգուրւում ես,
Նրանց հետ երկար համբուրւում ես,
Եթերքի վրայ ես երազում,
Որ քեզ գաղտնիքն է իր ասում։
Իսկ երբ մէգը գրկում է քեզ,
Կաթ-կաթ լալիս վրադ մեղմապէս,
Դու էլ արցունքըդ նրա հետ,
Գոհար շիթեր սիրաւէտ,
Ուղարկում ես դէպ վերև
Իբր աստղերին քո պարգև։
Թալարազեղ շղթաներով
Վէհ լեռներն են քեզ կապում,
Բայց դու քո սառ ալիքներով
Գորով գիրկդ ես ընդունում։
Մինչ ձկներն են զրւարթ խաղում՝
Պար բռնած քո ջրում զով,
Ինչ-որ տեղից գալիս՝ սահում
Ջեփիւռը քո երեսով։
Հրաշալի՛ ես խաղաղ նինջով
Կամարի տակ երկնքի,
Քո սիրախօս, նուրբ մրմունջով,
Երգ քաղցրը բերկրանքի...
Բայց այս ինչ է, էքնաղ Լէման,
Որ դարերի ընթացքում
Կերպարանքով չարանըման,
Խոժոռ, համըր ու տրտում,
Այնտեղ ունես քո գրկում։
Դու յուզումով դժգոհութեան
Եւ զայրոյթով ատելութեան
Մերթ նրա գաղտնիքն ես հանում,
Նրա պատերի մըռայլ կողքին
Խիստ ալիքով ես զարնում,
Փրփրում, փլւում, փըչելով,
Գովում ցօղերըդ և կրկին
Տալ ես առնում՝ թինչելով։
Նա է Շիլիօն ապարանը,
Վրկան մարդկանց բռնութեան,
Թըշւառութեան օրօրանը,
Բնակարանը գերութեան։
Օ մռայլ Շիլիօն, քո պատերում
Որքա՜ն մարդիկ կորստեան
Մատնըւեցան սև օրերում
Դու մեծերի բռնութեան։
Քո շուրջ յուզած տագնապներով՝
Համըր պիտում էր աշխարհը
Քո ցաւերը խուլ ու խըռով
Եւ լըսում քո հառաչները։
Եւ մինչ յուզման մէջ մարտական
Իր երկիրն էր վոթորկում,
Մի կամքով չար, թշնամական
Թաղած էր քո մութ խորքում
Բոնկիվարը բազմաչարչար,
Արդարութեան գինուորը,
Տանջանքի մէջ մի չարաչար։
Նրա յանցանքն էր—իր սէրը
Դէպի իր ըստրուկ երկիրը։
Յանդուգնն նա վատ բռնութեան
Չընազանդել էլ չուզեց,
Արդար խօսքով սուրբ վրկութեան՝
Նա վեր ելաւ ու վազեց.
Վազեց դէպ մարտ, դէմ չարութեան,
Ինքն առաջին, քաջ ու մենակ...
Աւա՛ղ, մենակ... Այն ժամանակ
Նա զոհ եղաւ նենգ զօրութեան.
Ճակատագիրը նրան չըգըթաց,
Ձըխզճացին նրան մարդիկ
Եւ խոր բանտի պատերը թաց
Մընացին պաղ դէպի նրա լաց,

*) Լէման կամ Ժընէվի լիճ՝ Շւէյցարիայում։

Դէպլի տանջանքը սաստիկ։
Ձիրիմական խրլուճեան մէջ
Նրա տնքոցն էր դուրս սողում,
Մինչդեռ սիրտը կատաղի վէճ
Ինքն իրան հետ էր մղում,
Մինչդեռ շղթան ձայնում էր խուլ,
Անգութ, ինչպէս մի դահիճ,
Մինչդեռ մըռայլ մտքերն անդուլ
Նորոգում նրա ցաւի ճիչ։
Օ դաշն օրհաս, և մթէթէ նա՝
Իր երկրից զուրկ յաւիտեան՝
Այժմ ապրում է՝ անխընայ
Մահի համար, որ կըստանայ
Այնտեղ, այդ մութ խորութեան
Մէջը բանտի բռնութեան։
Ա՞յդ էր, ինչ նա երազում էր,
Ինչ նա յուզած քարոզում էր,
Որի համար էր կռւում,
Որի համար է մեռնում...
Աղերսական նրա հայեացքը
Յառւում է դէպ նեղ լուսանցքը.
Բարձրը, հեռւում կըտոր երկին,
Կապոյտ դաշտը եթերքի,
Ահա, ընկաւ նրա աչքին,—
Կաթեց շիթըն արցունքի...
Երկի՜նք, որքան այդ լուսափայլ
Կամարդ, անհուրջը բախտի,
Տարբեր է այն խուլ ու մըռայլ
Կամարիցը մութ բանտի.
Որքա՜ն լայն ես, որքան ազատ,
Որքա՜ն ես նրան դու հարազատ։
Ո՞ւր ես, կանթեղ դու աշխարհի՝
Արե՜ւ, լոյսիդ է կարօտ.
Ո՞ւր էք, լեռներ դուք վիթխարի,
Յաւերժ հիւրեր երկնի մօտ.
Ո՞ւր էք, դաշտեր ու հովիտներ,
Նրա մանկութեան օրօրոցներ.
Ի՞նչու չըկաք, եթերական
Բընակիչներ, ո՛վ ամպեր,
Ամպեր վազող, անհամբեր,
Եւ դո՛ւ, և դո՛ւ, լի՜ճ սիրական,
Ո՞ւր է դէմքըդ ժպտասէր.
Կալանաւորն այն տրտմական
Ի՞նչ կարօտով քեզ կառչէր
Իր տառապանք, յոյս ու սէր...
Ա՛հ, մթէթէ քո ալիքներին
Մէկ օր նըրան կըյանձնեն,
Երբ թոկը չար անարգներին
Նըրան դիակ կըդարձնեն...
Նա սարսեցաւ... և գեղանի
Լիճը տեսաւ մըտաւչով.
Կարծես զգում էր խոր հառաչով,
Որ էլ տակն է կախաղանի.
Պատկերացաւ յանկարծ նրա դէմ
Իր ողջ անցեալն, խինդ ու լաց—
Կայծակի պէս փայլակնադէմ,
Կայծակի պէս սըրընթաց...

. . . . . .

Աչքերն յառած նեղ լուսանցքին՝
Երկար ժամեր պաղած են.
Մտքերն՝ իրանց սուր ընթացքին
Հետ՝ նրան հեռո՛ւ տարած են,
Եւ զըրաւած, ինքնամոռաց՝
Նա չէ տեսնում իր ներկան...
Յանկարծ նորից նա սարսըռաց—
Ուշքի եկաւ... Օ՜ այնքան
Թովիչ հըմայք Բոնիվարի,
Ի՞նչու ես դու անողոք.
Ահա դարձեա՛լ բանտը չարի,
Դարձեա՛լ նրա շուրջ քօղ խաւարի,
Դարձեա՛լ նոյն ցաւ, նոյն դժոխք։

Ա. Լ.

(կըարունակի)

ԹԷՈԴՈՐԱ *)

Պատմական վէպ Ի. Փիօրենտինիի

(Շարունակութիւն)

XXVIII

ԱՆՏՈՆԻՆԱՅԻ ՎՐԷԺԸ

Թէոդատա Թազաւորը, տեղեկութիւն ստանալով, որ բիւզանդացի ժեներալ Բելիզարիոսը նաւաճել է Սիկիլիան, սաստիկ վախեցաւ։ Նա կարծում էր, որ յաղթողը որտեղ որ է կըզայ իր մօտ՝ Բաւէննա։

Այս տեսակ ենթադրութիւններից յետոյ, Թէոդատոն անյապաղ դեսպանութիւն ուղարկեց Յուստինիան կայսեր մօտ ամենաստոր առաջարկութիւններով, ցանկանալով նաւաճել Իտալիան։ Նա խոստացաւ վճարել Յուստինիանին մի յայտնի պատերազմական տուրք և ուղարկել նրա նաւաճած Սիկիլիան երեք հազար ղինուր։ Այնուհետև պարտաւորւում էր չըխլել եպիսկոպոսների և ծերակոյտի անդամների կայքերը, առանց Յուստինիան կայսեր թոյլտուութեան։ Բայց շուտով Թէոդատոն իմացաւ, որ Յուստինիանը վճռել է միացնել Իտալիան իր տէրութեան հետ, և վախենալով, որ իր՝ Թէոդատոյի խնդիրը, չի կատարւի, նա խնդրեց Ագապիտո վարիչն գնալ Կոստանդնուպոլիս և խնդրել իր փոխարէն։ Փափը համաձայնեց,

բայց փող չունենալով Կոստանդնուպոլիս ուղևորելու, ստիպված էր գրաւ դնելու ս. Պետրոս եկեղեցու անօթները:

Այն ինչ Թէոդատոյի այս բոլոր փորձերը բոլորովին չէին հետևում Բիւզանդիոնի կայսեր և նրա ժեներալ Բելիզարիոսի վճիռը՝ ամբողջ Իտալիան նուաճելու: Բելիզարիոսը վերցրեց Նէապոլիսը և ապա Հանդիսաւոր կերպով մտաւ Հռոմ: Թէոդատոն փախաւ և սպանուած էր, իսկ Սիլւէրիօ փափը ծերակոյտի և ժողովրդի հետ երդուեցին հաւատարիմ մնալ յաղթողին:

Անտոնինան, որ միշտ գտնուում էր իր ամուսնու մօտ, գործադրեց իր ամբողջ կանացի խորամանկութիւնը և պէրանքը, որպէս զի նորից հաւատ ընծայէ իրան ամուսինը և հմտոզի նրան, որ այս ամբողջ դժբախտ պատմութիւնը Թէոդոզիոյի հետ ոչ այլ ինչ է, եթէ ոչ ամենակեղտոտ զրպարտութիւն, որ մտածել էին Անտոնինայի թշնամիները նրան վնասելու նպատակով:

Փոփոխամիտ և թոյլ Բելիզարիոսը անմնատուր եղաւ իր պէրող կնոջ կախարդանքներին և չընայելով, որ երդուեց Մակեդոնիային՝ ոչ ոքին չասել նրա մասին, մատնեց նրան և միւս մատնիչներին: Վերջի վերջոյ խորամանկ Անտոնինան կարողացաւ համոզել իր ամուսնուն, որ իրան զրպարտել են և որ մեղաւորներից պէտք է վրէժն առնէ:

Դժբախտաբար Բելիզարիոսը համաձայնեց նաև այս վերջինին և դժբախտ երեք ծառաները դրեցան Անտոնինայի տրամադրութեան ներքոյ: Այդ սարսափելի մեզերան, Թէոդորայի արժանաւորագոյն բարեկամը, ցոյց տւեց իր անսանձ վարքի ամբողջ խստութիւնը: Նա հրամայեց բերել իր մօտ դժբախտ երեք ստրուկին, ամեն մէկի լեզուն կտրեց, իսկ այնուհետև նրանց կտոր-կտոր արին:

Այսպէս էր առնում վրէժը իր թշամիներից նախկին կուրտիզանը:

Այսպէս բարբարոսաբար ոչնչացնելով դժբախտ Մակեդոնիային և երկու ծառային, Անտոնինան չըհանգստացաւ, որովհետև մնացել էր դարձեալ մէկ թշնամի, այն է լէյտէնանտ Կոստանդինը. Բելիզարիոսի այդ հին բարեկամին չէին կարող այդպէս շուտով ոչնչացնել, հասարակ ստրուկների նման, անհրաժեշտ էր համբերութիւն ունենալ և պէտք է որ մի առանձին առիթ լինէր:

Այդ առիթը շուտով պատահեց: Պրիսկիդիս անունով մէկ հռոմէացի, յայտնեց Անտոնինային, որ լէյտենանտ Կոստանդինը խլել է իրանից, ի նշան պատերազմական յաղթութեան, երկու հատ ոսկի սուր: Անտոնինան խորհուրդ տւեց Պրիսկիդիոյին, խնդրել իր ամուսնուն, և ահա մէկ անգամ, երբ Բելիզարիոսը ձիով անցնում էր Հռոմի հրապարակով, Պրիսկիդիոն կանգնացրեց նրան խուռն բազմութեան մէջ և այսպիսի հարց առաջարկեց. «Արդեօք նախատեսնուած է կայսերական օրէնքներում, որ սպանները կողոպտեն խաղաղաբնակ ժողովրդին»: Ժեներալը խնդրեց պարզել իր խօսքերը և իմանալով սրերի գիպուածը, խոստացաւ գործի քննութիւն նշանակել:

Թէպէտ ժեներալը շատ յարգում էր լէյտէնանտ Կոստանդինին, բայց որովհետև փաստը աչքի ընկնող էր, ինքը որպէս զօրապետ, չէր կարող թողնել այս կարևոր գործը առանց քննութեան: Ժողովելով բոլոր սպաներին, նրանց թւում և լէյտենանտ Կոստանդինին, Բելիզարիոսը խնդրեց վերջինին, որ վերադարձնէ Պրիսկիդիոյին իր սրերը:

—Ասելի շուտ ես Տիբրոս գետը կրձգեմ նրանց, —աղաղակեց վիրաւորուած Կոստանդինը:—Սրերը ինձ են պատկանում պատերազմի իրաւունքով:

Բելիզարիոսը նոյնպէս բարկացաւ:

— Բայց դու մոռանում ես, որ ես ինչպէս քո տէր, կարող եմ հրամայել, որ իսկոյն վերադարձնես սրերը:

— Բայց և այնպէս ես չեմ վերադարձնի, — պատասխանեց լէյտենանտը:

Բելիզարիոսը ստիպված հրամայեց կանչել զինուորներին և ուժով խլել տալ սրերը Կոստանդինի ձեռքից:

Սաստիկ վիրաւորուած լէյտենանտը բոլորովին կորցրեց գլուխը, մերկացրեց սուրը և յարձակեց իր զօրապետի վրայ, բայց զինուորները արգելք եղան:

Կարգապահութիւնը այդպէս խանգարելու համար լէյտենանտ Կոստանդինը պէտք է ենթարկւէր զինուորական դատարանին: Բայց իրաւաբանական ընթացքը չափազանց երկար թւաց Անտոնինային. նա հրամայեց այն զինուորներին, որոնք Կոստանդինի վրայ պահապանները էին նշանակուած, խեղդել նրան, որ և իսկոյն կատարեցին:

Ե. Մարթիրոսեանց

(Կըշարունակւի)

ԸՐՋԱՆԿ ԲՆԱԿԱՏԵԼԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Բոդլերից

III

ՀԵՌՈՒ ԱՅՍ ԱԶԽԱՐՀԻՑ

Գեանիը—դա մի հիւանդացոց է, ուր ամեն մի հիւանդ իր տեղը փոխելու ցանկութեամբն է համակուած: Մէկը կուզէր տանջւել վառարանի մօտ, իսկ մի ուրիշը հաւատացած է, որ կարող է առողջանալ... միայն պատուհանի մօտ լինելով:

Ինձ եւս թւում է, որ կարող էի ես երջանիկ լինել միայն այնտեղ, ուր չըկամ.—ահա՛, ահա այդ մասին է, որ յաւիտենական կռիւ եմ մղում իմ հոգու հետ:

—Ասա՛ ինձ, հոգի՛, իմ թշուառ, սառցի պէս սառա՛ծ հոգի, արդեօք լաւ չէ՞ր լինիլ, եթէ մենք Լիսսաբօն գաղթէինք: Այնտեղ տաք է, եւ դու կարող էիր տաքանալ արեւի տակ նիշտ այնպէս, ինչ-

պէս մողէսը։ Այդ ծովեզերեայ մի խաղաղ է. ասում են, որ նա կառուցած է մարմարիոնից, եւ նրա բնակիչները այնքան են ատում բուսականութիւնը, որ բոլոր ծառերը արմատահան անելով՝ ոչնչացնում են։ Այդ բանը, ըստ ո֊ն ճաշակի, կըլինէր՝ ապրել լոյսի եւ հանգիստի աշխարհում, եւ տեսնել նրանց անդրադարձումը ջրի մէջ։

Բայց հոգիս դեռ լուռ է։

—Դու սիրում ես հանգստանալ. շարժումը դիտելով. եթէ այդպէս է, գնանք Հոլլանդիա, այդ երջանկաւէս երկիրը։ Թուցէ դու կենդանանաս այն հողի վրայ, որի միայն պատկերացումովը դու՝ մուզէյ այցելած ժամանակներդ՝ սքանչանում էիր։ Ա՛րդ, ի՞նչ ես մտածում՝ կայմերի անտառով, եւ սանդուղքի աստիճանների մօտ եղած նաւերով ծփող Ռոտտերդամի մասին։

Սակայն հոգիս կրկին լռութիւն է պահում։

—Թուցէ դու գերադասում ես Բաթա՞ւիան... ուր կարող էիք գտնել մեր ցանկացած Եւրոպական կեանքը, արեւադարձային գեղեցկութեան հետ միացած։

Ո՛չ մի խօսք... Չըլինի՞ թէ հոգիս բոլորովին լռել է... մեռնելով։

—Կամ թէ գուցէ դու արդէն հասել ես այն աստիճանի անզգայութեան, որ սիրեցիր տանջանքներդ!... Օ օ՜օ, եթէ այդ ճշմարիտ է, ուրեմն վազեցէք դէպի Թորնէօ. կամ թէ աւելի եւս հեռու՝ հարաւեան ծովի մրնչեւ միւս ծայրը, այնտե՛ղ, ուր վերջանում է կեանքը, ուր բեւեռն է գտնւում։ Նրանից այնտեղ միայն կողմնակի կերպով է դիպչում այդ երկրին, այն էլ երեմամբ, եւ ամբողջ օրւայ այդ երկարատեւ փոփոխութիւնները, լոյսի եւ ստւերի այդ անսովոր անցողութիւնները, աւելի են մեծացնում նրա միակերպութիւնը—միակերպութի՛ւն, որը չըգոյութեան սկիզբն է։ Մենք այնտեղ կարող էինք ընկղմւել խաւարի մէջ երկար ժամանակ, եւ հազիւ թէ հիւսիսափայլի օրանը կարողանայ մեզ հասնել, ինչպէս դժոխքի ցոլքը!

Վերջապէս, իմ հոգին պատասխանում է ինձ, յայտնելով իր տրտունջները.

—Ուր կուզես գնանք, միայն թէ՝ լինի այս աշխարհից հեռո՛ւ եւ հեռո՛ւ...

Դ. Բարուրեանց

Մո՛ւզա

Ինձ դեռ ժպտում էր կեանքի արշալոյս
Վառ երազների, յոյսերի միջից,
Երբ դո՛ւ, ո՛ Մուզա, ինձ ցոյց տըւեցիր
Պրսակդ անթառամ չքնաղ ծաղկանցից։

Ես այդ ժամանակ լոկ երգում էի
Սրտերի վրայ սիրով համակած,
Եւ անփոյթ, ազատ միտս ծրծում էի
Սիրոյ ճենճարն ստով պատրանած։

Բայց ինձ չըթողիր միտս զւարճանալ
Մատաղ տարիքի տուրք երազներով,
Ո՛ Մո՛ւզա, Մո՛ւզա, դու ինձ չըթողիր՝
Սիրել ու սիրուել մաքուր իղձերով։

Եւ ես վեր առայ պրսակդ հեշտագին
Հիւսած անմահ գոյն-գոյն ծաղկանցից,
Եւ ուրախ դըրի համարձակ ճանթիս,
Որ դեռ չէր կենդանած կեանքի հոգսերից։

Բայց ես ի՞նչ տեսայ, անհամար փշեր
Փաթաթած էին ծաղկանց ցօղունին,
Բուրմունքի տեղակ այն բարմ վարդերից
Բուրում էր միայն հոտ մեռելային։

Զգում եմ այո՛, խաչիս ծանրութիւն,
Չե՛մ կարող կանել նրա ոյժի հետ,
Ծաղր ու նախատինք դարձած ամենքին՝
Ես այս աշխարհից կըկորչեմ անհետ։

Պետ. Մոնումեանց

ԿԵՆՑԱՂԱՓՏՈՒԹԻՒՆ

I

ՁԱՅՆԻ ՔԱՂՑՐԱՀՆՉՈՒԹԻՒՆԸ

—

Ինչպէս որ լաւ երաժշտութիւնը պահանջում է լաւ գործիք, այնպէս էլ քաղցրահնչիւն խօսւածքը՝ քաղցրիկ ձայն։ Ամեն երաժիշտ մի որև է գործիք ընտրում է, իհարկէ, իր ճաշակի համեմատ, սակայն նոյնը չէ կարելի ասել և՛ ձայնի մասին։ Ինութիւնը մէկին տալիս է ցածր, միւսին բարձր ձայն, մէկին խուլ, միւսին ուժեղ, քաղցրահնչիւն. բայց այնուամենայնիւ մեզանից իւրաքանչիւրը կարող է մի որոշ աստիճան իր ձայնի վրայ իշխել։ Եթէ ունէք բարձր, ուժեղ ձայն՝ չըպիտի թողնել որ նա սուր և թափանցող դառնայ. իսկ ցածր ձայն ունեցած ժամանակն էլ՝ չըպիտի հասցնէք նրան քթի տակ անմեկին մրմնջոցի։ Ուժեղ կամքը և մշտական դիտողութիւնը կարող են մեր օրգանի ականջ զարնող, անախորժ տեմրը մեղմացնել, նրան կոպտութիւնից՝ ճկուն, ամենահնարաւոր մոդուլեացիաների ընդունակ դարձնելով։ Ի միջի այլոց՝ իմաստ կարևոր է թոյլ չըտալ, որ ձայնը ծկլթայ ելևէջների ժամանակ, որպէսզի նա ծիծաղ յարուցանող ճիչեր չարձակէ, ճիչեր, որոնց սաստիկ հակամէտ են կանացի բարակ ձայները։ Բարեկրթութիւնը ինչպէս որ միակերպ հեռացնում է ճչողութիւնը, որն անվայելուչ է հասարակութեան մէջ, այնպէս էլ թոյլ, ցածր արտասանութիւնը, որ

Կրօնաւորները գտնուելն մի կնոջ կօշիկ

Նկար Նեռիի

դժւար է լինում հասկանալ։ Սովորութեան ոյժը իր ազդեցութիւնն անում է ձայնի ամենաբարձր և ամենացածր նոտերում անդամ։

Մեր ձայնը պէտք է ընդունակ լինէ մոդուլեացիաների, նոյն իսկ ամենալսիստ յուզման րոպէներին մենք պարտաւոր ենք մեր ձայնի վրայ իշխելու, նրա ելևէջով արտայայտելով մեր ամեն մի դրդմունքը—սպառնալիք թէ աղաչանք, զայրոյթ թէ փայփայանք,—միևնոյն ժամանակ դուրս չգալով գեղեցկի և թոյլատրելիի սահմաններից։ Ինչպէս որ մարդկային դէմքերի դծագրութիւնը սակաւ առ սակաւ ենթարկւում է մեր բնաւորութեան հազիւ նկատելի տիրապետող ազդեցութեանը, այնպէս էլ մարդու հիմնական յատկութիւններն են դրոշմւում ձայնի շշնջոցի մէջ աստիճանական կարգով։ Հետևապէս մեր օրգանի միջոցով մեզ յայտնւում է մեր բարոյական յատկութիւնների մասին ճիշտ եզրակացութիւններ անել։

—Չէ՞ որ դու ինձ ամենևին չես ճանաչում,—բացականչում է Կայոսը Արքայ Միդասի մէջ, Բամնէտին դառնալով։

—Օ՜, ոչ,—պատասխանում է նա,—քեզ ձայնիդ հնչիւնից եմ ճանաչում։

Նոյնը աւելի բանաստեղծօրէն արտայայտում է Հենրիխը՝ Եօրդանի լողութեան միջնորդութեամբ սիրունիկ կոմեդիայի մէջ, երբ Կլարայի ընդդիմախօսութեանն է պատասխանում.—Ինձ չըճանաչելո՞վ դու ի՞նչպէս գերեցիր ինձանով!

Ես բեզ հատացայ, բո դիւրիչ ձայնիկը լսելով.
Սրեվի ճանճանչի պէս յանկարծ, իմ սիրտս բախուեցաւ
Հէնց որ միայն շրթերիդդ առաջին հնչիւնն ինձ այցելէ,
Եւ այսպէս շարունակ, յաւելի ուժեղ ու սաստկագին
Դուսուում, գերուում էր խօսուածիդ ձայներից իմ հոգին։

Որին և հէնց ինքն է պատասխանում հետևեալ խօսքերով։

Սիա այն տաճարում, որտեղ որ բո սիրտն է ամխուսած,
Սրբազան այդ կրծքում, ուր որ ճա արագ է բաբախում,
—Հէնց որ դու խօսում ես եւ ձայնիկդ հնչում է զանգի պէս
Օ՜, այդ վեհ, սուրբ ժամին աղօթքի հրաւէր է ճա կարդում։

Ով որ ուզում է իր ձայնը քաղցրահնչիւն դարձնէ նա պէտք է ամենայն մի դէպքում չափազանցութիւններից աշխատի խոյս տալ։ Խօսելու ժամանակ նա իր բերանը չըպէտք է սեղմի, որի պատճառով խօսքերի արտասանելը դառնում է անորոշ, այնպէս որ ոչ ոք չէ կարողանում որոշել նրանց, իսկ շատ անգամ էլ, ընդհակառակը, ձայնը անտեղի կերպով բարձրացնում էք այն աստիճան, որ կարծէք, գործ ունէք խուլերի հետ։ Չափազանց շուտ խօսելու, բառերը մի՛մեանց ետևից արագ-արագ արտասանելու ժամանակ էլ՝ կուլ են գնում մի քանի խօսքեր, որոնցից շատերը անցնում են առանց մի որ և է ազդեցութիւն անելու, սակայն երկարաձիգ ճառաբանութիւնն էլ, իր համեմատ, ծիծաղելի և անտանելի է։

Նա, որ ամեն մի վանկը չափազանց երկարացնում է և չէ կարողանում բաւական արագ արտասանել, նոյն իսկ ամենահասարակ միտք, կարծիք յայտնել, նա հանդէս է գալիս հասարակութեան առաջ շփոթւողի, վախկոտի դերում ճիշտ այնպէս, ինչպէս և միւսը, որ խօսում է առանց դադարի ուրիշներին իրանց միտքը, իրանց կարծիքը արտասանել չըթողնելով։ Նա, ով ուզում է գեղեցիկ խօսել՝ չըպէտք է կուլ տայ միավանկ բառերը, այլ ամենայն մի խօսք պէտք է արտասանի պարզ, որոշ, պարտուպատշաճ շեշտումով։ Հասարակական ճառախօսութեան և դասախօսութիւնների ընթերցման ժամանակ՝ չըպէտք է խօսքերի և նախադասութիւնների վերջերում ձայնի եղանակը իջեցնել, որովհետև այդտեսակ դէպքերում նրանք մնում են և՛ անըմբռնելի, և՛ անհասկանալի։ Խօսելու ժամանակ բոլոր վատ սովորութիւններին ի հարկէ, հարկաւոր է անպատճառ վերջ տալ. չէ՞ որ չէ՞ կարելի բառերը հանել ատամների միջով. պէտք է ձեռք քաշել փսփսալուց և կակազելուց այդ վատ սովորութիւնից։ Որ հեշտ չէ այդ բանից յետ կենալը,—դրան խօսք չունենք. բայց այնուամենայնիւ, հնարաւոր է. ձեզ ապացոյց կամքով ուժեղ բազում մարդկանց օրինակները, սկսած վաղեմի հռետոր Դէմոսթենէսից, որ խօսքերը պարզ արտասանելու համար, փոքրիկ, հարթ քարեր էր դնում լեզուի տակ, և աշխատում իր ձայնով ծովի ափին զարկւող ալիքների աղմուկը ծածկել։

Կակազութիւնը շնչառութեան անկանոն կարգաւորելուց, նեարդային համակարգութեան ցասկոտութիւնից, կամ օրգանական թերութիւնից կախում ունի՞ թէ ոչ,—այդ դեռ լիովին չէ որոշւած։ Զանազան մարդկանց մէջ այդ բանը կարող է հիմնւած լինել այլ և այլ պատճառների վրայ, բայց, այնուամենայնիւ, հասարակութեան մէջ կակազն անախորժելի է։ Յաճախ հանդարտ խօսակցութեան ժամանակ՝ կակազութիւնը լինում է միանգամայն աննկատելի կամ թէ՝ եթէ նկատելի է՝ շատ սակաւ, այն էլ միայն յուզման ժամանակ, և հէնց այդ է որ նրան վնասում է։

«Ես ճանաչում եմ մի կակազ երիտասարդի, որ կարդալիս բառերը արտասանում է առանց կակազման։ Եւ երբ կարդալուց յետոյ՝ իր կարդացածը իր շրջապատողներին բացատրել, պարզել է ցանկանում,—սկսում է կակազել։ Եւ հարցիս թէ՝ ինչ է պատճառը, որ կարդալիս նրա կակազ լինելը չէ երևում, մինչդեռ, ընդհակառակը, խօսելիս՝ գլուխը շարժում, վեր ու վար է տանում, աչքերը բաց ու խուփ անում, լեզուն խաղացնում և պռօշները սեղմում է, և հազիւ թէ, վերջ ի վերջոյ, կարողանում է իր ցանկացած բառը արտասանել։—Նա պատասխանեց, որ այդ շփոթելուցն է, բառը սխալ արտասանելու վախից։ Ուրեմն կարելի է ասել, որ կակազութիւնը առաջ է գալիս նաև այսպէս ասած՝ պարբերաբար շփոթելուց» *)։

Կակազը իր խօսքերով մի յայտնի ազդեցութիւն թողնել ցանկանալով՝ ընկնում է ծիծաղաշարժ դրութեան մէջ թէ տհաճութեան բուռն ձգտումի և թէ քնքշութեանց արտայայտման ժամանակ։

Թէ որպիսի անհաճոյ հետևանքների կարող է հասցնել կակազման այդ տեսակ անակնկալ այցելութիւնը մարդուն, կարելի է տեսնել այն զարհուրելի անցքից, որ պատահել է մի երիտասարդ մատենագրի։ Նա երկար հոգացողութիւններից յետոյ հազիւ թէ կարողանում է իր մի նոր պիէսը թատրոնի տնօրէնի առաջը կարդալու

*) Փանօթ. Ֆ. Ֆ.

թոյլատուութիւն ստանալ։—«Միայն թէ պէտք է արագ կարգաք, որպէս զի շուտ վերջացնէք»,- ասաց տնօրէնը։ Այս արդէն բաւական էր, որ դրամատուրգը սկսէր կակազել։ Դժբախտ հեղինակը վանկերը ծամծմելով, ձգձգելով, խօսքերը կուլ տալով, և կամ՝ նրանց քաղհան անելով՝ կարդաց իր պիէսը և սկսեց սպասել իր դատավճռին, հետզհետէ նաւաճելով ամբողջ երեք գործողութիւնները...

—Այդ մի նշանաւոր բան է,—ասաց տնօրէնը, մենք այդ պիէսը կբեմադրենք և ֆուրօր կ'անենք։

—Ձշմ-մ-մ-մարիտ... Ե-ե-և դա, ա-ա-ա-ասում էք, մ-մ մի արտասովոր բ-բ-բան է.—բացականչեց լուսափայլ բանաստեղծը։

—Անկասկած,—հաստատեց տնօրէնը,—երեք արարւածով մի դրամա, որի մէջ բոլոր գործող անձերն էլ խօսում են կակազելով,—այդ չէ՞ որ մի չքտեսնւած նորութիւն է, և անշուշտ մեծ տպաւորութիւն կբեմողնի հասարակութեան վրայ...

Այդ տեսակ անախորժ դէպքերի առաջը պէտք է առնել, նրանց վերջ տալ, և այդ հնարաւոր է միայն կամքի ոյժի օգնութեամբ։

Խօսելու ձիրքը բնական ընդունակութիւն չէ, այլ մի արւեստ, որ հարկաւոր է զարգացնել և որում անհրաժեշտ է կատարելագործւել։

Բոդերիկ Բենեդիքսն ասում է. «Իւրաքանչիւր մարդ ունի խօսելու ձիրք, այսինքն՝ կարող է խօսել, սակայն ամեն ոք չէ կարող լաւ խօսել, այսինքն՝—արդ, ազդու և հասկանալի, այնպէս որ նրա խօսքերը՝ իր մէջ պարունակող մտքից անկախ՝ լաւ տպաւորութիւն գործէր։ Խօսելու շնորքը մի ընդունակութիւն է, ինչպէս և մանգալ գիտենալը։ Եւ ինչպէս որ մարդկանցից շատերը լաւ մանգալ չըգիտեն, չեն իմանում ինչպէս հարկն է պահել իրանց ամբողջ մարմինը, այնպէս էլ խօսելու ձիրքն է, որ կարելի է ձեռք բերել միմիայն վարժողութեամբ։ Դեղեցիկ խօսելը չէ կախւած միայն մարմնական ընդունակութիւնից. այլ քանի որ նրա միջնորդութեամբ արտայայտւում են վերացական, հոգեկան մտքեր,—ապա ուրեմն խօսելու հմտութիւնը նոյնպէս կախում ունի և կանոնաւոր մտածողութիւնից։ Այդ պատճառով էլ խօսելու ձիրքը հասարակ ընդունակութիւնից մշակւում է արւեստի միջոցով։

Դեղեցիկ խօսելը մի փառահեղ զարդ է այն ամենի համար, որոնք տիրապետում են այդ բանին։ Ձայնի քաղցրահնչութեան մէջ ամփոփւած է անսահման, անսպառ հիացումը։ Գողտրիկ, մեղմ և ճկուն ձայնը գուրգուրում՝ փայփայում է մեր զգացմունքը, երաժշտութեան նման, ամենահասարակ խօսքերին իսկ վայելչագեղութիւն տալով։

Ոչ միայն տեսողեան միջոցով, ինչպէս առհասարակ ընդունւած է կարծել, այլև լսողութեան միջոցով՝ նա գնում է դէպի սիրտը։

Ամենալսելօք հռետորը, ամենասրամիտ խօսակիցը միայն այն ժամանակն են գնահատւում ըստ արժանւոյն, երբ ամենը՝ ինչ նրանք խօսում են՝ արտայայտւած կլինի քաղցրահնչիւն ձայնով և դրւած՝ խօսքի գեղեցիկ ձևի մէջ»։

Այստեղ առաջ կբերենք վերը յիշած Եօրդանի «Լսողութեան միջնորդութեամբ» կոմպոզիայից մի կտոր ևս, ուր փառաբանւում է ձայնի քաղցրահնչութեան գօրութիւնը.

Լսողութեան միջոցով դու կարող ես բախանցել
Հոգուդ ընտիր ուրիշների խորը գաղտնաբար.
Խօսքերի մէջ ես անգամ բազմւած է սնոտիւն,
Բայց ձայնը ինձ տւած է սուեղ իմանալու համար:
Երբ որ լարը դողում է եւ մեզ համար այն ժամին
Պարզ է նրա դողացող խօսակցութեան ելեւէջ,
—Այսպէս էլ ես գաղտնիքներ ծածկել է եւ մեր հոգին,
Որպէս կծկւած՝ պահել ես, ինչպէս գողեր, նրա մէջ:

Գ. Բ.

Հրատարակչական ափխարհից

Մեր ընթերցողներին անցեալ տարի ծանօթացրել էինք Պետերբուրգում նշանաւոր հրատարակիչ Ա. Վոլֆ եւ Ընկ. պարբերական հրատարակութիւնների հետ, «Лучъ» լրագրի առիթով, որ Ա. Վոլֆ և ընկերութիւնը 96 թ. նոյեմբերի 1-ից պ. Զուկովի խմբագրութեամբ սկսել էր հրատարակել։

Կարճ ժամանակի ընթացքում, համարեա, մի քանի օրւայ մէջ, «Лучъ» գրաւեց ամբողջ Ռուսաստանում ընթերցողների շատ մեծ շրջան։ Ստացաւ նախազգուշութիւն, մի կարճ ժամանակով, իբրև պատիժ, դադարեցրին «Лучъ»-ը. դրա փոխարէն Ա. Վոլֆ եւ ընկ. տւին «Новости» լրագիրը, մինչև վերստին սկսւեց «Лучъ»-ը լոյս տեսնել, սակայն ոչ պ. Զուկովի խմբագրութեամբ։

Այժմ, ներկայ ապրիլի 1-ից իսպառ դադարեց «Лучъ» ամենօրեայ մեծադիր լրագիրը։ Ահա թէ ինչ է յայտարարում այդ մասին թերթի հրատարակիչը.

Նոյեմբերի 1-ից 1893 թ. ձեռնարկելով „Лучъ“ ամենօրեայ լրագրի հրատարակութեան, ինձ նպատակ դրի ստեղծել ազնիւ, լուրջ, զգայուն, անաչառ մի օրգան, բոլորին մատչելի գնով։

Լրագիրը միանգամից իսկ ձեռք բերաւ այնպիսի յաջողութիւն, որ տարիներով է վաստակւում։ Աշխատակիցները առաջնադասեր, լրագրական գործը սիրող, յարգող ու նրան ազնւութեամբ վերաբերւող անձնաւորութիւններ էին։ Ձեռնարկութեանը շատ նպաստեց և այն խոշոր գրամագլուխը, որ դրւած էր նրա կանոնաւոր կազմակերպութեան համար, համապատասխան ժամանակակից լրագրական գործի պահանջներին, ինչպէս անում են քաղաքակիրթ աշխարհներում։

Ես հաւաստի էի, որ խստութեամբ վերաբերւելով սկսած ձեռնարկութեան, համաձայն օրէնքի տպագրւում էի լրագրիս մէջ այն, որ հակւած է օրինականութեան, բարոյութեան, այն-որ թոյլատրւում է տպագրական գործին վերաբերեալ օրէնքը։ Ես իրաւունք ունէի սպասելու, որ այս գործը ապահովւած է, ամուր է և ազատ արտաքին ազդեցութիւններից, շինծու խոչընդոտներից։

Սակայն վրդնը ցոյց տւաւ, որ արդի պայմաններում մամուլի գործը շատ խախուտ է, եւ թակաւ զանազան պատահարների, որ չի կարելի ոչ նախատեսնել և ոչ էլ առաջն առնել։

Այս պատճառով ապրիլի 1-ից դադարում է „Лучъ“ և բաժանորդները հրաւիրւում են յետ ստանալ իրանց բաժանորդավճարը։

Յայտնում ենք մեր ցաւակցութիւնը Ա. Վոլֆի ընկ. «Лучъ»-ի դադարման առիթով։ Սա Ռուսաստանում առաջին լրագիրն էր, որ հրատարակւում էր կատարելապէս ժամանակակից, արեւմտեան լրագրների ձեւով, աշխուժով։ Անպատեհ չենք համարում ասել, որ նոյն սիստեմով 90 թւականից մենք ձեռնարկեցինք մեր հրատարակչական գործի ընդարձակելուն։

Երազ պէտք է համարել, երբ Ռուբիւրը դեռ ուղիսունական թւերին տպագրւում էր մի քանի հազար, յետոյ Տարազ պատկերազարդ հանդէսը

սրանց չաւելաձ Աղբիւրի մանկավարժական բաժինը առանձին գրքոյկներով և ապա մեր Аносъ ամենօրեայ լրագիրը օրական 12,000 օրինակ տարածելը, մի շարք գրքոյկների հրատարակութիւնը մեր Արօրից...

Եւ եթէ Ս. Վոլիի ընկ. միլիօն րուբլիներով դրամագլուխը, աշխատակիցների ստւար խումբը և շատ տասնեակ հազար բաժանորդները չեն կարողանում պատահարների, խոչընդոտների առաջն առնել, բնական է այն հետևանքը, որին ենթակայ է մեր ձեռնարկութիւնը. մի ձեռնարկութիւն, որ մինչև այսօր էլ շատերի աչքին փուշ է...

Անկեղծ ենք խոստովանում, որ շատ ժամանակ չի քաշիլ, երբ հայի գիտակցութիւնը իր բարձրութեան վրայ կը կանգնի. նա կը զղջայ իր արած խարդաւանանքների համար, սակայն շատ ուշ ու անօգուտ...

Հայոց միակ մանկական ամսագիր Աղբիւրը համեմատեցէք Ռուսաստանում հրատարակուող Նոյնանման հանդիսի հետ, համեմատեցէք հայ միակ իլլիւստրասիօն Տարազը նոյնպէս հարիւր հազար բաժանորդ ունեցող Թերթերի հետ և ապա մի փոքր էլ համեմատեցէք մեր աւելի ծանր պայմանները մայրաքաղաքի թերթերի պայմանների հետ, դուցէ այն ժամանակ տեսնէք գործի ծանրութիւնը և դաժան լինելը։

Մեզ շատերը ստիպում են, որ Տարազը դադարեցնենք և հրատարակենք ամենօրեայ լրագիր։ Կան նոյն իսկ շատ խոշոր գումարներով աջակցութիւն խոստացողներ։ Սակայն այդ քայլը մենք այսօր չենք անիլ։ Եղած լրագիրներն էլ բաւական են, եթէ նրանք լաւ մանաւանդ բարւոքւեն։ Մենք անհրաժեշտ ենք համարում, որ հայը պահպանի մի մանկական ամսագիր և մի իլլիւստրասիօն։

Մենք բոլորովին կամք չունենք արհեստական միջոցներով տարածել մեր թերթերը։ Մենք ձգտում ենք քաղաքակիրթ աշխարհներում օրէնք դարձած հիմունքներով տանել մեր գործը. կըլայողի, օգտուողն ազգն է ընդհանրապէս և չատկապէս մեր բաժանորդը. հակառակ դէպքում վնասը հայ մանուկինը, հայ ընտանիքինն է։

Միթէ կարելի չէ, եւ այդ դժուար է, որ մեր իւրաքանչիւր բաժանորդը իր շրջանում մի նոր բաժանորդ գտնի Աղբիւր-Տարազին։

Միթէ մեր ընթերցողները անհրաժեշտ չեն համարում, որ ամեն հայ ընտանիք Աղբիւր ունենայ եւ 3 ր. միթէ աւելի բանգ է, բան իրանց զաւակին զրկելը այդ ամենակարեւոր հանդիսից։

Մինչև օրս էլ դեռ շարունակում են ամեն կողմից մեր հանդէսները պահանջել,—սակայն ձրի։ Անցեալ 96 թ. 157 օրինակ Աղբիւր եւ Տարազ ենք ուղարկել մեր կողմից ձրի զանազան հաստութիւնների, գրադարանների, շրջանների։ Իսկ այդ արժէ 1570 ր., աւելացրէք դրա վրայ էլ տարեկան 4000 րուբլուց աւելի դէֆիցիտը։

Անթիւ համակրական նամակներ, աշխատակիցների շատ լայն և կազմակերպւած շրջան՝ սակայն այդ բոլորի հետ և հայ բաժանորդի անտարբերութիւն։ Թերթը մէկն ստանում է, հարիւրը կարդում։ Մեզ հաղորդում են, որ փարթամ հացում իսկ Տարազի №№-ը Մարդ. ընկ. Գրադ. Ընթերցարանում միմեանց ձեռքից են խլում ընթերցողները. նրանք, որոնց համար մի 6 ր. տալը և թերթ ստանալը, ոչ մի ծանրութիւն չէ։ Սակայն հայը դեռ սորվոր չէ վճարել լրագրին այնպէս, ինչպէս վճարում է կրկէսի, կառքի, ուտել-խմելու, քէֆի համար։

Փէլիեօնի փոխարէն

Յարգոյ խմբագիր, դուք ինձ առաջարկում էք նկարագրել այն օպերետային ներկայացումը, որ անցեալ մարտի 22-ին տեղի ունեցաւ Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի դահլիճում յօգուտ, ներողութիւն, ի բարոյական անկումն Հայոց Հրատարակչական ընկերութեան։ Ձշմարիտն ասած, մեծ պարտք էք դնում ինձ վրայ. դա մի դժւար գործ է։ Բայց կըփորձեմ կատարել այդ պարտքը և կաշխատեմ նկարագրել այդ երեւելի հանդէսը *փոտոգրաֆիական ճշդութեամբ*, եզրակացութիւնները թողնելով ընթերցողներին։

—

Օրը շաբաթ էր, երեկոյեան եօթ ժամը։ Ես կատարում էի իմ սովորական զբօսանքը Գոլովինսկիյ պրոսպեկտում։ Մէկ էլ տեսնեմ դէմ ու դէմ վազում է Կոլոլ Թաղի պատւաւոր քաղաքացի խարազ Սարգսի տղայ Հաստատիր, Հաստատվիզ, էհ, Թող չընեղանայ բարեկամս, մի քիչ էլ հաստագլուխ Գէւօն։ Պէտք է ասած, որ այն օրից երբ Գէւօն ապօրինի ճանապարհով ուրիշների բիճայից ժառանգութիւն է ստացել, այլ ևս նրան չեմ հանդիպում իմ բարեկամ տներում, ուր նա սովորաբար դալիս էր ձրի ճաշեր և ընթրիքներ անուշ անելու։

—Բարով, Գէւօ ջան, էդ ձեր ես շտապում,—հարցրի ես տեսնելով բարեկամիս քրտնաձ և հևալով։

—Գնա կորիր, քո գլուխը չունեմ,—պատասխանեց Գէւօն, ինձ մի կողմ հրելով և ինքն առաջ վազելով։

Թէ Գէւօն իմ գլուխը չունի, այդ ես վաղուց գիտէի, վասն զի նա իսկի գլուխ էլ չունի, բայց դարձեալ հետաքրքրւեցի, որ իմանամ նրա այս անգամւայ գլուխ չունենալու պատճառը։

—Մուլափ թէ աղվէր ես,—հարցրի,—Էլի ինչ է պատահել։

—Էն է պատահել, որ դուն ռենեգատ իս։

—Վա, վա, Գէւօ ջան, էդ ինչ խուրը տակեմէն իս դուրս տալի. ռենեգատս վռւրն է։

—Ռենեգատն էնէ է, վուր ինքը քելեվս չի սիրի ու ուրիշի գլխին էլ հառամ կոնէ։ Մէ դնա էէ, ձլիս փուրըս կշտացիլ է, էկիլ էք ու կերածս գլխիս հառամ իք անում։ Դուն ռենեգատ իս, դուն ազնիւ ու մարդուր պործիչ չիս։

—Հասկացայ, լժռւմ։

—Ի՞ժռւմ, էլ ինչ լժռւմ։ Ի՞ժռւմ էն է, վուր էս իրիկու փիզ ու փիզ նմաններին պիտի սիվցնէինք, վունց որ դուն իս մեր երիսը սիվցնում խալխի առաջ...

—Ի՞նչ սիվցնիլ, ինչ ես ասում։

—Ընտրութիւն է, բաս չի՞ս իմացիլ, աբա թէ զոչաղ իս, արի հետս ու մեր սիվ կենձիքը համբրի։

Ասաց բարեկամս ու վազեց դէպի Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի դահլիճը։ Ես մատս կծեցի ու հետևեցի նրան։ Մտնում եմ դահլիճի նախասենեակը և ինչ եմ տեսնում։ Մէջ տեղ կրակ բռնածի պէս դէս ու դէն էր վազում օրւայ հերոս սև-Սանդրօն։

—Սանդրօ ջան, վռնցին մեր բանիը,—շնչասպառ գոչում է Գէւօն։

—Դիփուևանցն էլ բերիլ իմ,—պատասխանում է Սանդրօն հանդիսաւոր եղանակով։

Գէւօն փաթաթւում է Սանդրօի վզին ու պաչպչւում են։

Նայում եմ շուրջս և սարսափում։ Գլուխս սկսում է պտոյտ գալ զանձիլի, սոխի, սխտորի, թթու դրած բոխի հոտից։ Լսում եմ բղկոցների, որոշտալու ձայներ, և ինձ թւում է, թէ ջհուդի բաղնիք եմ ընկել։ Ըստ երևոյթին, նոյնն են զգում և մի խումբ տիկիններ ու օրիորդներ, որովհետև բոլորն էլ թաշկինակներով ծածկել են իրանց քթերը։

—Այդ ինչ է պատահել,—հարցնում եմ մի թաշկինակաւոր տիկնոջ։

—Մինէ չըգիտէք, այսօր ներկայացում է յօգուտ Հայոց Տրատարակչական ընկերութեան. մենք էլ եկել ենք Ծամաշան տեսնելու։ Տեսէք, պարոն Մաղքոս, դուք մեզ մօտեցաք, այն միւս խումբ տիկիններն ու օրիորդները թարս թարս են մտիկ տալիս մեզ և ձեզ։ Զգույշ, չըլինի թէ ձեզ սևացնեն։

—Տիկին,—պատասխանում եմ ես,—ես ոչ ընտրող եմ, ոչ ընտրուղ, որ սևացնեմ կամ ինձ սևացնեն։ Թող ինչքան ուզում են ինձանից նեղանան, բայց ես էսթեթիքական ճաշակ ունեմ, թոյլ տէք ձեր շրջանում մնալ։

Հետզհետէ հասարակութիւնը բազմանում է։ Ես բարձրանում եմ վերնայարկը։ Դահլիճը շատ լուսաւորւած է, բայց դարձեալ տիրում է մթութիւն, որովհետև այնքան սև դէմքեր և մեծ քթեր կան, որ ամեն լոյս ընդունակ են մթնացնելու։

Ամբիոն է բարձրանում կլորիկ, կարմիր աչքերով, դեղին ականջներով, կարմիր երեսով մօտ 45 տարեկան մի պարոն։ Դա յայտնի քելեխբաշին է, որ գիտէ միաժամանակ հինգ տեղ քելեխ ուտել։ Եւ այնքան խղալի քելեխներ է կերել, որ երեսից, աչքերից, ճակատից և ամբողջ փայլուն դէմքից դմակի իւղ է թափւում։ Նա զանգահարում է։ Ժողովականները ներս են գալիս։ Երևում են մի խումբ չէզոք մարդիկ, որոնք ոչ մի չետին միտք չունեն, ոչ մի քելեխի հետ կապ չունեն և եկել են լոկ Ծամաշայի համար։ Ներս է մտնում հայ դրականութեան ներկայացուցիչների փոքրիկ խումբը 8-10 հոգի և համեստաբար նստում ուր որ պատահում է։ Նրանց հետ ներս են մտնում թաշկինակաւոր տիկիններն ու օրիորդները և համեստաբար նստում, ինչպէս վայել է կրթւած գեղեցիկ սեռին։

Վերջապէս, դահլիճը դղրդում է և երևում է մի ահագին փիղ։ Նրա ճակատին մեղրամոմի մխով գրւած է. *ես եմ վիթխարի մղոսին*։ Նրա հաստ պարանոցին նստած է գեղարւեստների մարմնացում—տիեզերահռչակ Համբարձմի ամին։ Փնքշութեան և դրացիայի ներկայացուցիչը, հանդիսաւոր օրւայ առիթով, հագել է կարմիր ֆրակ, սպիտակ ժիլետ, դեղին գուլպաներ։ Փրակը կարւած է Թաւրիզի առաջնորդարանի մահուդից, ժիլետը Բարեգործ. ընկերութեան «կրկնակի» անդորրագրերից։ Դէմքը վերին աստիճանի հրապուրիչ է, ճակատը փայլում է ապոլլոնեան հպարտութեամբ, աչքերը կայծեր են արձակում, կայծեր, որոնցից իւրաքանչիւրը մի մի գեղեցկուհու սրտում հրդեհ է առաջացնում։

Նրա ետևում նստած է գիտութեան մարմնացում—նոյնպէս տիեզերահռչակ Ստեփան ափուն։ Նա հագած է սև քղամիդ, մի ձեռին պահած է մի մեծ մատեան, միւսում եղէգնեայ գրիչ և խորասուզւած գրում է «Ես եւ իմ անցեալը» վերնագրով մի շարադրութիւն։ Մերթ ընդ մերթ նրա մէջ զարթնում է բնական ձգտում՝ դէն ձգել մատեանն ու գրիչը, վերկենալ, քղամիդի փէշերը վեր քաշել և փղի վրայ մի սիրուն կանկան պարել։ Բայց լրջամիտ Ապոլլոնը ամուր բռնել է նրա փէշերից և թոյլ չի տալիս։

Գեղեցկի և գիտութեան ետևում տեղաւորւած է դեղին աչքերով, տափակ ճակատով և ճուղունդրի պէս կարմիր երեսով ու ականջներով մի 35 տարեկան մարդ, որ խիստ նման է Թամամշեւի քարւանսարայի շկափշկիփի։ Դա ինքն է Բիսմարկի և Մոլթքէյի մտերիմ բարեկամ քաջամարտիկը։ Նա գինւած է ոտից մինչև գլուխս և աջ թևի վրայ բռնած է մի վահան. նրա աչքերից մեղր, ներողութիւն, հուր է թափւում, իսկ դէմքից ալիզարին, ներողութիւն, կրակ... Նա սոսկալի է և շարունակ բեղերը սրելով, մարսի հայեացքներ է ձգում իր շուրջը։ Նրա ձախ երեսի վրայ նշմարւում է մի սպի։ Դա մի նշանաւոր ճակատամարտում ստացած վէրքի հետքն է, որ ունի մարդկային աջ ձեռի ափի դրոշմը։ Նրա կրծքին քաշ է արած մի ոսկէ ժետօն, որի վրայ փորագրւած է. *ապրիլի 9-ին, արքունական Ծատրոն*։

—Խէչօ, մի վախենա, էստի իմ,—ասում է մէկը։

Դա Սանդրօն է, որ մի դագանակ ձեռին, փղին բիզ-բիզ անելով, ներս է քաշում։ Փղի կարճլիկ պոչից քաշ է ընկել մեր Գէւօն։

Սանդրօն գոռում է.

—Ճանապարհ տւէք մաքուր և անարատ գործիչներին... Ճանապարհ տւէք...

Դահլիճը թնդում է ծափահարութիւններով։ Փիղը մաքուր եւ անարատ գործիչներին ցած է բերում դահլճի աջ կողմում, այն ինչ գործիչները ազատամիտ լինելով, պիտի ծախ կողմը բռնէին։ Բայց փիղը ինչ գիտէ պարլամենտական կարգ ու կանոնը։ Ինչ և մաքուր ու անարատ գործիչները չըգիտեն, որ աջ ու ծախը պարլամենտներում նախագահի կողմից է հաշւում։

Քելեխբաշին, երեսի իւղը սրբելով, զանգակ է հնչեցնում և հրաւիրում նախագահ ընտրել։ Խուժանը գոռալով, միմեանց հրելով, ոտքի է կանգնում և քւէարկում։ Ձայների ահագին մեծամասնութեամբ ընտրւում է մի մարդ, սափրած, եղած փայլուն երեսով։ Նա ունքեր չունի, ոսկրոտ ճակատի տակ աչքերի փոխարէն երևում են երկու բիգով փորած ծակեր։ Նա հանդիսաւոր բազմում է նախագահական բազկաթոռի վրայ։ Նրա աջ կողմում նստում է խղալի երեսով քելեխբաշին, իսկ ձախ կողմում մի ինչ-որ տիճոր, միթամ քարտուղարն է...

Կարդում են ինչ-որ տեղեկագիր։ Դրականութեան ներկայացուցիչները, միամտաբար կարծելով, թէ իրանք գրականական հիմնարկութեան մէջ են, ոտքի են կանգնում խօսելու։ Բայց նախագահը նրանց կարգի է հրաւիրում, բացատրելով, թէ գրականները օպերետային ներկայացումներին մասնակցելու իրաւունք չունեն։

Տեղեկագիրը հաստատւում է մի ձայն։ Սանդրօն մատներով դնով է ածում փղի փորի վրայ. գիտութեան մարմնացումը քղամիդի փէշերը բարձրացնելով, սկսում է կանկան պարել։ Մարսը բեղերը սրում է և ձախ երեսը բաց անում։ Գեղարւեստը բացականչում է.

—Լօխ էլ մերոնք են, լօխ էլ մաքուր ու անարատ են, հունց որ ես...

—Հիմա տրեպակա,— ասում է նախագահը։

—Չա ընտրութիոն, ընտրութիոն,— գոռում է Համբարձի ամին, և բոլորը սոսկում են։

Փւէարկում են, և ձայների ահռելի մեծամասնութեամբ ընտրւում են՝ մի ոչխար, մի փոդրադչի ու վաշխառու, քեչեխբաշին և մղպսին։ Փիղը իր առջևի թաթերը դնում է նախագահի սեղանի վրայ, հասարակութեանը շնորհակալութիւն յայտնում, յետոյ սկսում է երդել Այսմաւուրքից մի ռօմանս։ Մարսը ժետօնը բարձրացնում է գլխից վերև և գոռում.

—Ուռա։

Ժողովականների չեզոք մասը շտապում է հեռանալ դահլիճից։ Մնում են մարդուրներն ու անարատները։ Դրականութեան ներկայացուցիչների և թաշկինակաւորների փոքրիկ խումբը նոյնպէս ուզում է հեռանալ։ Բայց այդ միջոցին նրանք լսում են, թէ օպերետտը վերջացել է, այժմ պիտի ֆարս խաղացւի։ Բայց այս մասին միւս անգամ։

Մաղաս

Կրէտէի գործերը

—

Ցոյն հայրենասէրները շարունակում են արիւնթեամբ կռւել իրանց արիւնակից կրէտացիների ազատութեան համար։ Քրիստոնեայ Եւրոպան իր ռազմանաւերով թէև պաշարել է Կրէտէն, սակայն այնքան անհերդաշնակ է եւրոպական այդ մոնստր-կոնցերտը, որ շունը տիրոջը չի ճանաչում։ Կրէտացիներն այնքան պաշար ունին, որ վեց ամիս էլ կրըաւականանայ կղզու բոլոր բնակիչներին և կամաւորներին։

Եւրոպական ժողովուրդը և նրա հետ շատ արիստոկրատներ, իշխաններ ու դքսեր կամաւորների խմբերի մէջ են մտնում։ Հեղինակներ, բանաստեղծներ, նկարիչներ նոյնպէս մեծ թւով կան յոյն ապստամբների մէջ։

Կրէտէում առաջին նահատակ երիտասարդ ռուսի ատրճանակը տարել են Աթէնք և շատ մեծ ցոյցեր են արել այնտեղ։ Սուլթանը երկու կրակի մէջն է մնացել։ Նա յայտարարել է, որ եթէ իրան ազատ թողնեն, ինքը շատ հեշտութեամբ հաշտութիւն կըկայացնէ իր հպատակների հետ, կըկատարի նրանց պահանջները լիուլի։ Սակայն այժմ ինքը սուլթանն էլ անզօր է իր հպատակներին զսպացում տալու։ Միւս կողմից էլ Տաճկաստանում հոգևորականները դրդռում են քրիստոնեաների դէմ մոլեռանդ տաճիկ ամբոխին։

Յոյները հայ յեղափոխականների հետ՝ ասում են՝ մի ինչ որ դաշինք են կապել և շատ հայ կամաւորներ էլ կան յունական բանակում։

Մի հայ, որ պէտք է սուլթանին սպանէր՝ ձերբակալել էին, սակայն յոյները նրան շոգենաւից ազատեցին։

Պաշտօնապէս թէև պատերազմ չէ յայտարարւած, սակայն վիրաւորեալների, սպանւածների ցուցակը շարունակ հաղորդում է հեռագիրը։ Տաճկական շատ ամրութիւնները յոյն կամաւորները հողի հետ հաւասարացրել են։

Իտալիան եւրոպական տէրութիւններից ամենից շատ է բարոյապէս աջակցում կրէտացիներին։ Գարիբալդեան կամաւորները հերոսական գործեր են գործում։ Այդ խմբի մէջ 18-60 տարեկան կամաւորներ կան։

Սոլիսբիւրիի Պարիզով անցնելը շատ է փոփոխել իրերի դրութիւնը և թէև Եւրոպան այժմ կրէտէի համար ընդհանուր նահանգապետ է որոնում, սակայն լռւր, քանի որ այդտեղ Աթէնքի թագաւորի ժառանգը պէտք է լինի փոխարքայ—այդպէս են պահանջում կրէտացիք։ Նրանք ոչ մի ինքնավարութեան մասին չեն կամենում լսել, այլ միմիայն շաղկապել են կամենում Յունաստանի հետ։

Որովհետև յոյն զօրքերի բանակը կազմ ու պատրաստ է և զինւորական ծախսերը այնպէս են անւում, ինչպէս տաք պատերազմի ժամանակ, այդ պատճառով հաւանական է, որ արիւնհեղութիւնը մեծ չափեր ընդունէ Տաճկաստանում։

Կղերի իշխանութեան մէջ

—

Վերջապէս երկար ժամանակ Կ. Պոլսի ագէնտների Ատրպատականի զանազան անկիւններում պատրաստած դաւադրութիւնները, եթէ դյուրս չեկան և պարսից վարչական մարմինները իսպառ մերժւելով մերժւեցան և կուրաբար ձեռնամուխ չեղան նրանց կողմից առաջարկած ստոր միջոցներին, բայց վերջապէս այդ ագէնտները իրանց ստացած ու վատնած անչափ գումարները մի բանի ծառայացրած լինելու համար, տգէտ խաւժանի կրօնամոլութիւնը բորբոքելով կամեցան գոնէ մի բան արած լինել։ Եթէ ուշադրութեամբ քննենք վերջին վեց-եօթ տարիների ընթացքում իրար ետևից կատարւած այլ և այլ դէպքերը, որոնց շարժիչ լծակի ծայրը միշտ եղել է հեռու արևմտքում, այն ժամանակ մենք կըհամոզւենք, որ սա մի ամօթալի խաղ է և միայն խաւարում գործողներին պատւաբեր։ Գրգռել խաւժանը, բորբոքել նրա հաւատքի հուրը և արհաւիրք գցել ողջ Թաւրիզի նման մի բազմամարդ քաղաքում և անել ինչո՞ւ համար, նրա համար, որ իբր ռուսաց հիւպատոսի մատակարար-խոհարարը ձեռք է մեկնել, իր տուն քաշելու մի պարսիկ, այն էլ մուշտայդի կնոջը։ Այնպիսի մի բան, որ եփած հաւերն անգամ կարող են խնդալ, եթէ միայն նրանք Թաւրիզի փողոցներով անցած լինեն։

Պարսիկ կանայք, նամանաւանդ մեծ ընտանիքների անդամները միշտ շրջապատւած են լինում փողոցներում մի քանի տասնեակ հետևորդներով, բայց ինչպէս ասացի, այն դաւադիրները, որոնք պարբերաբար թալանում, ստիպում էին պարսից վարչական անձնաւորութիւններին, որ քանդեն հայոց վանքերը, գրպարտելով որ նրանք մի մի բերդեր են, խուզարկել հայոց թաղերն ու դիւղերը, խաբելով, որ այնտեղ հազարներով զէնքեր ու մթերքներ են ամբարւած, արդելել լրագրների և գրքերի մուտքը Պարսկաստան, առարկելով որ դրանցով քարոզում են հայերին չըհնազանդւել շահի իշխանութեան և ուրիշ հազարաւոր քզրպարտութիւններ, որոնց թւելու համար պէտք է հա-

տորներ գրել։ Եւ գիտէք որ հայերը, այն հայերը, որոնք Ամերիկայում միքանի միլիօն ժողովրդի մէջ միայն վեց հազար տուն են կազմում, այն էլ ցրուած տասն գաւառում, այն ինչ պարսից կառավարութիւնը ինքը շատ լաւ էր հասկանում, որ իրան խորհուրդներ տուող ագէնտները մեծ խնամքով, գաղտնի նկարում էին և արեւմուտի ճամբում Ամերիկայի սահմանի վրայ գտնուած գաւառների կարտերը, որոնցից հատ հատ գրաւում էին պարսկական սլոստային ծառայողները։

Այսպէսի դէպքերը ուղիղ է վաղուց Թաւրիզի հայը չէր տեսել, քանի որ նրան ո՞վ էր բանի տեղ գցողը։ Մի՞թէ լսելացի պարսիկները չեն իմանում, որ Թաւրիզի հարիւր հազար տուն բնակիչ ունեցող քաղաքում, հայերը եօթ հազար տուն հաղիւ են կազմում, այն էլ մեծ մասի տղամարդիկը միշտ գտնուում են Ռուսաստանում պանդխտութեան մէջ։ Այդ չնչին մարդկանցից իրանց ի՞նչ վնաս կարող է հասնել։ Բայց քանի որ Պարսկաստանում կառավարութիւնը չունի ուժեղ զօրութիւն, քանի որ զինուորական, ադմինիստրացիական և ուրիշ վարչական ատեանները անուանով միայն կան, իսկ երկիրը իսկապէս ղեկավարողը ղուրանն է և կղերական դասը. քանի որ կղերը միշտ իրան ցանկացածը հակառակ կառավարութեան կամքին առաջ է տարել և տանում է շարունակարար, այդպիսի դէպքերի պատահելը զարմանալի չէ։

Սէիդները (որոնք հաւատացած են, թէ Ծագում ունին Ալիի սերունդից, որոնք աշխատութիւնով ու քրտնքով ապրուստ ձեռք բերելը իրանց անպատւաբեր, կառավարութեան ու ժողովրդի մեծ դասակարգին իրանց ծառայեցնելը արդար են համարում, միշտ մերկ, միշտ աչքն ուրիշի ունեցածի վրայ տնկած մարդ գալիս) և կրօնամոլ խուժանը միշտ առիթ են փնտռում կողոպուտներ ձեռք բերելու և խառնակութեան միջից իրանց բաժինը հանելու, զարմանալու չէ և նոր բան չըպէտք է համարել։ Նրանք մի նշանի էին սպասում։ Նշանը տուեց և ահա իրար ետևից կողոպտում են խեղճերի տները, փողոցներում ծեծում, վիրաւորում, լկտում, կողոպտում և սպանում անզէն ու թշուառ արարածներին։

Կարծես թէ Թաւրիզի նեղ-նեղ փողոցները, ծուռ-ու մուռ ուղիները և ծածկած բազարները հէնց ստեղծած լինեն միայն այդպիսի չարագործութիւնների համար. իսկ կղերը իր նեցուկը, զէնքը, սէիդների դասակարգը պարտաւոր է պաշտպանել և որպէս զի նրանց չըմատնէ կառավարութեան ձեռքը, նա կըշօրինէ իր խաղերը ու կըգոռայ ամեն տեղ շէրիաթի անունով։ Որպէս զի վարչութեանն էլ ստիպէ լռելու, ահա նա եօթներորդ օրն է, որ անկիւններում քարոզում է աղմուկը շարունակել, որպէս զի կառավարութիւնը ճարահատեալ կղերին դիմէ, խնդրէ, թախանձէ և խօսք տայ ներել անցածը։ Երբ արդէն գլխաւոր գործողները կըպահուին, կըմտնեն մուշտէիդի դուռը և Սէիդ-Համզա (անձեռնմխելի ապաստարան), այն ժամանակ նա կըզիջանի և մի կերպ կըխաղաղացնէ խուժանին, միշտ իր միւննաթը դնելով կառավարութեան ուսին, որ ինքն է նրա պաշտպանը։

Այդ խաղերից մինն էլ այն է, որ ահա քանի օր է Մուշտէիդը պահանջում է հիւպատոսի մատակարարխոհարարին դատելու, որն իբր առիթ է տուել խռովարարներին։

Ասպես

Հակակուլտուրականներ

Հախտի բերմամբ Բագուն մի բացառիկ պայմանների մէջ է։ Հարստութիւնն այնտեղ դիպչում է րոպէների, ժամերի ընթացքում և ոչ թէ տարիների ու դարերի։ Այդ անբնական երեւոյթի հետեւանքն այն է, որ երեկուայ հասարակ մշակը այսօր միլիոնատէր է, մի ժամ առաջ մայթեր մաքրողը—այժմ ժամը տասնեակ հազարներով իր եկամուտը հաշուող է։

Այստեղ հարստութիւնը գտնուում է մեծ մասամբ այնպիսիների ձեռքում, որ փոխանակ նրան ճշմարիտ ճանապարհի վրայ դնելու, հրում է դէպի յետ, յոռի ուղին։ Կեանքն այստեղ աւելի Սոդոմ-Գոմորային է, քան Հռովէական։ Զեղխութիւնն ու անառակութիւնն իսկ այստեղ այն չէ, ինչ կործանած նախկին Հռոմում։ Այժմ՝ երբ առասպելականութեան է հասնում Բագուայ նաւթի հարստութիւնները, նրանք, որոնց ձեռքին է այդ գործը, փոխանակ կանոնաւորելու, ընդարմակելու, աշխատում են գործը ուրիշին յանձնելու և իրանք հեռանալու ասպարիզից։

Բագուայ նշանաւոր նաւթարդիւնաբերող պ. Թաղիևը իր նաւթային բոլոր ձեռնարկութիւնը վաճառել է հինգ միլիօն րուբլիով անգլիական կապիտալիստներին. սրա օրինակին ասում են ուրիշ նաւթարդիւնաբերողներ էլ են հետևելու։ Մի՞թէ սարդ ապացոյց չէ այդ բագուցիների անբաղձալիութեան։ Մենք շատ կըցաւէինք, եթէ հայերն էլ հետևէին պ. Թաղիևի վատ օրինակին։ Իբրև սկզբունք չըպէտք է ոչ մի հայ վաճառէ իր ձեռնարկութիւնները, եթէ մէկին հազար անգամ աւելի գին տան։ Ի՞նչ էր Բագուն սրանից 50, 25, 10, նոյն իսկ 5, 3 տարի առաջ. պէտք է նոյն համեմատութեամբ և առաջ նայել։

Հայը չըպէտք է խոյս տայ մանաւանդ արդիւնաբերելուց, աշխատելուց։

Միշտ առաջ, միշտ ազնիւ, անխոնջ աշխատանք, արդար վաստակ—ահա թէ ինչ են պէտք հային։

գեղարուեստ

թատրոն, երաժշտութիւն

խուալական օպերային ներկայացումները ամսոյս 4-ին վերջացան։

Հասարակութիւնը կարծես յոգնել էր վերջին ժամանակս և նոյն իսկ պ. Մենոտտիի բենեֆիսին թատրոնը լիքը չէր, իսկ տ. Պիցցագալլիին, որ մի երկու ամիս դեռ չըկայ որ Թիֆլիսի հասարակութիւնը նրա անունը ոգեշունչ վրայ երևելիս՝ սրտատրոփ թատրոնի կասսի առաջ սպասում էր, թէ արդեօք իրան էլ տոմսակ կըհասնի, այժմ բոլորովին մոռացել էր ու նրա բենեֆիսին թատրոնը համարեա դատարկ էր։ Ներկայ չէին նոյն իսկ այն բանաստեղծները, որ երգեր էին ձօնել նրան և դրատուում էին։ Սակայն այդ սակաւաթիւ հասարակութեան մէջ տ. Պիցցագալլիին չէր մոռացել նրա անձնական բարեկամների և յարգողների մի շատ փոքրիկ շրջանը, որ ոչ քի էր ընկնում իր ընծայաբերութիւններով։ Եւ տ. Պիցցագալլիին ստացաւ այնքան թանգագին ընծաներ, որքան ամբողջ լմբի մնացեալ արտիստները միատեղ չէին ստացել։ Ահա թէ ինչ-

պէս է մեզ մօտ գնահատում տաղանդը, գեղարւեստը։

Իտալական խմբի կազմակերպութիւնը չաջող էր, սակայն երգեցիկ խմբի անհաւասար ոյժերը և մի քանի երկրորդական արտիստների մասնակցութիւնը ու արտաքին խոչընդոտները պատճառ եղան հասարակութեան անտարբերութեան և շատ շուտով թատրոնից սառչելուն։ Այն օպերաները, ուր երգեցիկ խմբի մասնակցութիւնը շատ է, նրանց ներկայացումն անցնում էր անյաջող և տպաւորութիւնը կորչում էր նոյն իսկ առաջնակարգ արտիստի խաղով, իսկ հակառակ դէպքում, երբ խօրը պատասխատու գործ չէր ունենում, այդ օպերաները սքանչելի էին անցնում։

—Զատիկ երեքշաբթի օրւանից էլ սկսւում են ռուս դրամատիկ խմբի ներկայացումները պ. Լիւդվիգովի ղեկավարութեամբ։ Տեղերի գները շատ էժանացրած են։ Խմբի մէջ արտիստների մեծագոյն մասի հետ ծանօթ է Թիֆլիսի հասարակութիւնը։ Բեսերտուարի մէջ կան և նոր պիեսներ էլ։

—Պ. պ. Աբէլեանի և Տէր-Գաւթեանի մասնակցութեամբ այնուհետև թատրոնում ներկայացման թէև շատ քիչ հասարակութիւն էր եկել անցեալ կիրակի, այնու ամենայնիւ Ոճրագործի ընտանիք պիէսը չաջողութեամբ անցաւ։ Պ. Աբէլեանը օր-օրի վրայ առաջադիմում է և մենք ուրախ կըլինենք, որ հայ դերասանական միութեան կազմակերպութիւնը չաջող ելք ունենայ։

—Զատկից յետոյ մեր փափկասուն տիկիններն ու օրիորդները մի ներկայացում պիտի տան Հայուհեաց Բարեգործ. ընկ. օգտին։ Կրկնութիւնները ընթանում են աշխոյժով և եռանդով։ Անշուշտ այդ ներկայացումը մեր հայուհիները կըչաջողացնեն տալ պետական թատրոնում։

—Պ. Վրոյրը այժմ Վլադիկաւկազումն է ներկայացումներ տալիս. պ. Աբէլեանը Զատկից դնալու է Երևանի և Ալէքսանդրապոլի կողմերը և մի շարք ներկայացումներ պիտի տայ մեր գիւղաքաղաքներում և գիւղերում, իսկ ամառը Ղարաբաղում ու Զանգեզուրում, Ջաբրայիլում և նրանց գաւառներում։ Եթէ անչաջող անցնեն այդ փորձերն էլ, այնուամենայնիւ ուշադրութեան արժանի է պ. Աբէլեանի և իր խմբի այդ ձիտաւորութիւնը և ցանկալի ամենքի կողմից աջակցութեան։

ԼՈՒՐԵՐ

Հայոց գործերի պատկերը հետզհետէ մթագնում է. Թուքատի կոտորածի չանճախումբը վերջացրել է իր գործը և Ռուս. գործակալութեան ասելով, չանցաւորները՝ թւով 140 հոգի տաճիկներ և 4 հայեր՝ ձերբակալւած են։ Իբրև թէ սուլթանը սրանց մահւան էր դատապարտելու, սակայն մահմեդականների մէջ գրգիռ չըյարուցանելու համար, թողել է այդ մտադրութիւնը։ Հարիւրաւոր մարդկանց կեանքը գնել լոկ ձերբակալութով – այդ տաճկի քաղաքականութիւնն է...

Հեռագիրները հաղորդում են, որ սուլթանի զիջումը հայոց պատրիարքարանին լոկ նրա մէջն է կայանում, որ նա ներել է երեք հայերի, որոնք դատապարտւած էին մահւան։

Կ. Պոլսի ոստիկանութիւնը մեծ երկիւղի մէջ է հայոց կոմիտէտների պատրաստութիւնների պատճառով, որոնք գործում են Ջենովայում և Լոնդոնում։ Ձերբակալւում են տաճիկնոր, յոյներ և հայեր։

Լոկ մխիթարութիւնը ֆրանսիական պատգամաւորների ժողովում հայերի մասին Գոտիէ-Կանիի և Կոշէնի հարցապնդումներն են, որոնք վերաբերում են Ֆրանսիայի բռնած սխալ քաղաքականութեան։ Կոշէնն այնքան հեռուն է գնում ասելով՝ թէ «կառավարութիւնը մտադիր չէ Հայաստանում կատարւած դէպքերի պատճառով նախաձեռնող հանդիսանալ և վերջին հարւածը տալ, մաքրելով Եւրոպայի այն աննկիւնը, որի պատմութիւնը մեր դարի նախատինքն է»։

«Օդ. Лист.»-ը հաղորդում է, որ Օրդայում մի սոսկալի կոտորած է տեղի ունեցել. տաճիկները կոտորեցին ոչ միայն յոյներին և հայերին, այլ նաև այլադաւաններին, դրանց հետ և հրէաներին։ Այդտեղի նահանգապետը իբրև թէ դատի կենթարկւի և խառնակիչները մահւան կըդատապարտւին։

Կ. Պոլսում հայերի վրայ հսկողութիւնը սաստկացնում են. այդ ցոյց է տալիս հետևեալ օրինակը։ Տրապիզոնից Լազարև շոգենաւով գնում էին 22 հայեր։ Այս բանը հէնց իմացան Տրապիզոնում, Կ. Պոլսի ժանդարմերիային տեղեկութիւն տւին։ Հէնց նրանք հասան Կ. Պոլիս, իսկոյն ձերբակալեցին այդ հայերին, որոնք կըմնան հսկողութեան տակ մինչև նրանց գնալու պատճառը իմանալը։

Նով. Обоз. լսել է, որ Թիֆլիսում Առևտրական ուսումնարան - բանալու հարցը վճռած է և շուտով կըներկայացւի պատշաճաւոր հիմնարկութեան։

Հայ գրողները մտադիր են հրատարակելու մի ընդարձակ ժողովածու, օգնութեան կարօտ մատենագիրների օգտին։ Ժողովածուին կըմասնակցեն ինչպէս Ռուսիայում, այնպէս և Տաճկաստանում ու Եւրոպայում ապրող գրողները։

Կոտորածներից ազատւած հայ որբուկները Հայաստանում մեծ հոգածութիւն են պատճառում մխսիոներներին, որոնք ամեն տեղ որբանոցներ են հիմնում երկու սեռի անձանց համար, թէ պատսպարելու, թէ կրթութիւն տալու և թէ արհեստներ սովորացնելու։ Կ. Պոլսի լրագիրները հաղորդում են, որ Պատրիարքարանը գաւառների առաջնորդութեանց, ինչպէս և Եւրոպայի հայ գաղթականութեանց շրջաբերականով պատւիրեց հոգ տանել, որ որբեր որդեգրող օտար հաստատութիւնների մէջ հայ եկեղեցու զաւակները հայերէն սովորեն, հայ եկեղեցու դաւանութեան մէջ մեծանան և եկեղեցական պաշտամունք վայելեն։ Այս բոլորը շատ լաւ, սակայն լաւ չէր լինիլ որ պատրիարքը հոգ տանէր, որ հայկական վանքերում էլ որբանոցներ հիմնւէին։

Առևտրական.

Անցեալ կիրակի Միրզոյեան բնիկ. ընդհ. ժողովն է կայացել. անցեալ 96 թ. եկամուտն է 1,150,000 ր.։ Առաջարկ է եղել 25,000 ր. այդ գումարից նւիրել հայ գաղթականների օգտին, սակայն ակցիօներներից ոմանք խոչընդոտ են եղել։ Մենք լսեցինք, որ Ն. Ֆ. ընկ. խորհրդի նախագահ պ. Ազ. Անանեանը, որ նոյնպէս մէկն է այն ընկերութեան անդամներից, եռանդով կըպաշտպանէր այդ առաջարկը և ոչ թէ անտարբեր կըլինէր դեռ այն դէպքում, երբ հեռու Դանիայի թագուհուց է ուղարկւում իր միջոցով հայ թշւառներին նպաստ։

Ըթէ այս 97 թ. հայերը իրանց եկամու-

տից 1% գոնեա գցէին ազգային գանձանակի մէջ, այդ գումարը կը հասներ բիւրաւոկիների։

— Թիֆ. վոխագարձ վարկի ընկերութեան 25 ամեակը լրացաւ այս տարի և անցեալ կիրակի օրը կայացած ընդհ. ժողովը վճռել է տալ 25,000 ր. զանազան բարեգործական գործերի համար և նուէրներ ծառայողներին։

Մեր պատկերները

I

ՊԱՏԶԳԱՄԲՈՒՄ

Ո՛վ չի յիշում 1878 թ. գարնան Սան-Ստեֆանոյում, Մարմար Ծովի ափերում ռուսական բանակների այն յաղթական գնացքները, իր շքազգեստով, զինուած, զարդարուած, զօրքերի մի քանի ժամում իրար ետևից շարքերով անցկենալը, որտեղ հեծելազօրը, կօզակները իրանց ամեհի երիվարներով և գոչնզդոյն տարազներով, թնդանօթաձիգները իրանց հինգ հարիւրի չափ թնդանօթներով և հետևակները իրանից զարդարուն դրօշակներով, նուագածու խմբերով։ Այդ տեսարանների կ. Պոլսեցու, մանաւանդ իգական սեռի վրայ թողած հիացում—ոգևորութիւնը դեռ շատ դարեր պատմելու են մայրերն իրանց զաւակներին։ Ինչ յոյսերի և ինչ անուրջների մէջ չէին ընկղմում նրանց դիտող աչքերը. բռնակալութեան տեղի էր տալ մարդասիրութիւնը, բռաւութեան սպառնում էր քնքշութիւնը չալևչալել։

Մեր նկարի մէջ գեղարուեստի աշակերտը մօտեցել է Սան-Ստեֆանոյում մի յայտնի տան պատշգամբին և իր կտաւի վրայ անմահացրել այն անուրջների մէջ ընկղմած մի խումբ գեղեցիկ սեռի ներկայացուցիչների դէմքերը, որոնք այն յաղթականների շարժումների և հոգու մէջ անթարթ աչքերով որոնում են իրանց փայփայած իդէալների իրականացումն։

II

ՄԱՏՆԻՉ ԿՕԶԻԿԸ. Նկար Նևլի

Կաթոլիկ վանքի կորրիդորում աբեղան գտել է մի կնոջ կօշիկ և շատ խորհրդաւոր կերպով ցոյց տալով ընկերոջը՝ եզրակացութիւններ է անում...

Տաղանդաւոր նկարիչն այնքան հիւմորով է արտայայտել այդ մոմենտը, որ ուշադրութեամբ նայելիս՝ ինքներդ նոյնպէս մասնակցում էք այդ խորհրդաւոր դիտողութեանը։

— —

ՁԱՆԱՊԱՐՀ. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Կառավարութիւնը մեծ գումարներ է որոշել ծախսելու Կովկասեան ճանապարհների և խճուղիների համար։

Դերբէնդից-Բաղու հերկաթուղու գիծն անպատճառ 1899 թ. յունուարին պատրաստ կըլինի, բացի այդ՝ Կովկասեան լեռնաշղթայով էլ հետազօտութիւնները շարունակւում են և կարճ ճանապարհով էլ Կովկասը միացնելու է Ռուսաստանի հետ։ Թիֆլիսից-Վարս ճանապարհը շինւում է տեղային արագութեամբ, մինչդեռ պէպի Զուլֆի, Ջամալի երկաթուղու գծեր տանելը թողնւեց ապագային։ Հերթական խնդիր է Ջաբրայելով Թաւրիզ էլ բանալ երկաթուղի։ Անշուշտ մի 4—5 տարի չի անցնիլ, երբ ամբողջ Կովկասում կըսփռուին երկաթուղու ցանցեր։

— —

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Թիֆլիս. Հազմաթիւ անձանց, որ փափագում են նոր հոսանքի հիմնական պատճառն իմանալ։ Այն կոիւը, որ սկսել է այժմ հայ ինտելլիգենցիայի մի փոքրիկ մասը «Մշակական» կոչւած կուսակցութեան դէմ, մտքի անկախութեան եւ առաջադէմ ուղղութեան կոիւ է նեխւած պահպանողականութեան դէմ։ Աշխարհի երեսին ամեն բան ապրում է, հնանում, մաշւում եւ յետոյ մեռնում։ Կար ժամանակ, որ ով «մշակական» էր՝ համարւում էր առաջադէմ։ Այդ իրաւացի էր։ Արծրունու դրօշակի տակ հաւաքւել էին ամենը, որ ունէին լուսաւոր ձգտումներ. քարմ եւ անկեղծ սիրտ ու ազատ զգացումներ։ Փոքրիկ էր այդ խումբը թւով, բայց զօրեղ էր իր բարոյական ուժով։ «Մշակական» կուսակցութիւնը կատարում էր առաջադէմ—քննադատ կուսակցութեան դեր։ Այդ տեւեց «Մշակի» հիմնադրութիւնից սկսած մօտ 20 տարի։ Բայց այն օրից, երբ այդ կուսակցութիւնը քննադատի դերը թողնելով փորձեց մեր հասարակական գործերի ղեկն իր ձեռն առնել, այն օրից այդ կուսակցութիւնը հետզհետէ դադար առներով առաջադիմութեան շաւղի վրայ, դարձաւ ինքը պահպանողական։ Այժմ նա ոչ միայն պահպանողական է, այլ եւ յետադէմ։ Աւելի՛, այսօր նա «ազատամիտ ուղղութեան» դրօշակի անուանով կատարում է զեղծումներ, չարիք։ Այլ եւս Մշակականներ չըկան, այլ կայ նորադոյն օբսկուրանտների մի հատւածուկ։ Բայց կեանքը պահանջում է անընդհատ առաջադիմութիւն։ Այսօր ով այդ զգում է, ում միտքը կաշկանդած չէ սեպհական նեղ շահամոլութեան զօգայով, շտապում է երես դարձնել խաւարամոլ դարձած կուսակցութիւնից։ Եւ ահա 5—6 տարի այդ կուսակցութիւնը օր օրի վրայ, ժամ ժամի վրայ բարոյապէս ընկնում է։ Կատարւում է քննութեան անողոք օրէնքը. մարմինը կատարել է իր դերը, հնանում է եւ այսօր արդէն նեխւում է ու քայքայւում։ Բարոյապէս այլ եւս գոյութիւն չունի «Մշակական կուսակցութիւն», այլ կայ մի յետադէմ եւ խաւարամիտ խումբ, որ կաշխից զուրս է գալիս մեր հասարակական գործերը իր ձեռքից բաց չթողնել։ Նա արդէն զգում է իր վերջնական անկումը եւ մի յուսահատ պատերազմ է մղում... ում դէմ։ Քննադատող առաջադէմ ուղղութեան դէմ, որին հետեւողները առ այժմ թէեւ քիչ են, բայց բարոյական ուժով զօրեղ։ Այդ այժը արդէն սկսել է ցոյց տալ իր ազդեցութիւնը մտքերի վրայ։ Հասարակութեան լաւագոյն մասը զգում է այդ եւ աւելի կըզգայ մի երկու տարուց յետոյ։ Հինը նեխւում է, փճում, ոչնչանում եւ նրա բեկորների վրայ կառուցւում է նորը։ Այդ նորի դրօշակի վրայ գրած չէ ոչ մի լրագրի անուն, նա ինքն ըստ ինքեան յղացել է, զարգանում է եւ օր օրի վրայ զօրեղանում իր սեպհական անունով։ Նա կարող է դաշն կապել միայն այն օրգանի հետ, որ դաւանում է նոյն սկզբունքները։ Իբրեւ նոր եւ քարմ ուղղութիւն, նա միայն նորի եւ քարմի հետ կարող է գործ ունենալ։ Ամեն մի նեխւած մարմին նրա համար համահաւասար գարշելի է...

Գալով մեզ, ուրախութեամբ ենք միանում այս նոր կուսակցութեանը։

— «Մշակի» Գրողին։ Էէր օրինած, այդքան ստախօս լինելով, ի՞նչ էք նստել Սալդատսկի բազարի հոտած քարվանսարայում։ Դուք խօմ մի կատարեալ Ջէդդին էք։ Խոստովանում ենք, կարդալով «օրագիրը», քիչ է մնում խելակորոյս լինենք. ի՞նչ համմատութիւններ, ի՞նչ սուր դարձուածներ, ի՞նչ երեւելի սրամտութիւններ։ Եթէ մի սատկած ծուկ ներկայանար մեզ Սւիֆտի հազուստով, մենք այնքան չէինք ծիծաղի, որքան դուք, պարոն Գրող, ստախօսի դերում։ Երեւակայում ենք, ինչ փուորր պիտի անէ այն վօղբուիը, որ պատրաստում էք հայ հեղինակների կեանքից։ Անշուշտ այդ օրը աշխարհի բոլոր ծայրերից կըզան ձեր երեւելի գրչի երեւելի քմամոլութիւն, ստախօսութիւնները լսելու։ Արասխանեանց, Զիրվանզադէ, Նազարեան, Յովհ. Թումանեանց, Փափազեանց ուրախութեամբ դնում են իրանց ձեր հանճարեղ գրչի տակ։ Բացի դրանից նրանք, ինչպէս լսում ենք, արդէն պատւիրել են մի նկար, որ ձեր վոդբուիը ներկայացնելու երեկոյ պիտի նւիրեն ձեզ։

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան.

Дозв. ценз. Тифлисъ, 5 апрѣля 1897 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., № 1—2